ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՄԵՐԻ ՌԱՖԻԿԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ. ՄԵԴԻԱՏԻՐՈՒՅԹԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ.01.06 – «ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **Երիցյան Սերգո Սարգսի**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հարությունյան Տաթևիկ Հովսեփի
բանասիրական գիտությունների
թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 12-ին՝ ժամը 12^{00} -ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^{ա}, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Պատմական կարճատև ժամանակահատված է անցել այն օրվանից, երբ փիլիսոփաներն ու սոցիոլոգներն արձանագրեցին տեղեկատվական հասարակության առաջացումը, որը կենսունակ է: Հասարակությունը, ինչպես նաև գիտական հանրության ներկայացուցիչները շահագրգռված են, որ այդ ոլորտում տեղի ունեցող գործընթացները՝ երբեմն բավական բարդ, ուսումնասիրվեն և բացատրվեն: Նման հետազոտությունները կնպաստեն թե՛ հումանիտար մի շարք առարկաների հետագա զարգացմանը, թե՛ կբարձրացնեն քաղաքացիական հասարակության ինքնագիտակցությունը, որի հետ կապված է սոցիալական առաջընթացը:

Ատենախոսությունը դիտարկում է տեղեկատվական հասարակության արդի վիճակին վերաբերող թեմաներից մեկը. ի՞նչ են տեղեկատվական հոսքերը (ՏՀ): ՏՀ-ը նո՞ւյնն է, ինչ ԶԼՄ-ները: Կոնկրետ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում ԶԼՄ-ներում, ի՞նչն է սկզբունքորեն նոր գոյացել սոցիալական ցանցերի, մոբիլ հավելվածների, ակնթարթային մեսսենջերների և այլ երևույթների առաջացումով: Ինչպիսի՞ն է նա՝ նոր լրատվամիջոցների այդ սպառողը: Ինչպիսի՞ն է տեղեկատվական հոսքերի ազդեցությունը անձնական և ազգային անվտանգության ասպարեզում: Այս աշխատանքը նվիրված է հենց այս ***արդիական խնդիրներին***:

Ավանդական մեդիատիրույթի՝ «նոր» և «այլընտրանքային» լրատվամիջոցներով ընդլայնումը հանգեցրել է տեղեկատվական հոսքերի ծավալի բազմակի աճի: Ավանդական և նոր լրատվամիջոցների մրցակցության ուժգնացման համատեքստում մենք ականատես ենք դարձել ավանդական լրատվամիջոցների վարքագծի ամբողջական վերակազմավորման: Ժամանակակից մեդիաինդուստրիայի առանձնահատկությունն այն է, որ, այսպես կոչված, «կայացած» լրատվամիջոցները, որոնք, լինելով տեղեկատվական գործընթացի առաջատարներ, երկար ժամանակ որոշում և ձևավորում էին լսարանի տեղեկատվական օրվա պատկերը, հայտնվելով տեխնոլոգիական մրցակցության իրավիճակում, կորցնում են առաջատարի դերն ու դառնում գործընթացի բազմաթիվ մասնակիցներից մեկը:

Ժամանակակից մեդիաինդուստրիայի այս բոլոր միտումները չէին կարող չանդրադառնալ մեր երկրի և ամբողջ տարածաշրջանի մեդիահամակարգի վրա: Բացի այդ՝ աշխարհում աշխարհաքաղաքական իրավիճակի բարդացումը, առաջատար պետությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի միջև հակասությունների սրումն ուղղակիորեն ազդում են մեր տարածաշրջանի վրա: Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրում՝ Ադրբեջանի (Թուրքիայի հետ համատեղ) կողմից լայնածավալ պատերազմի սանձազերծմամբ, արևմտյան երկրների և Իրանի երկարաժամկետ առճակատում, Մոսկվայի և Թբիլիսիի բանակցային գործընթացում առաջընթացի բացակայու-

թյուն, Մերձավոր Արևելքի տարածաշրջանում անկայուն իրավիճակ, Հայաստանում «թավշյա հեղափոխության» իրադարձություններ՝ այս ամենը հանգեցրել է տեղեկատվական հոսքերի ակտիվացման մեր երկրի և պետության ներսում՝ հիմնախնդիրը դարձնելով արտասահմանյան լրատվամիջոցների համակ ուշադրության առարկա: Բացի այդ՝ Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև հաստատված տեղեկատվական դիմակայության համատեքստում, երբ ՏՀ-ի քաոսն ու վերահսկողության բացակայությունը սպառնում են մեր երկրի տեղեկատվական անվտանգությանը, այս իրողությունը և վերոնշյալ բոլոր հանգամանքները վկայում են այն մասին, որ այս ատենախոսության թեման խիստ **արդիական է:**

Հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է հետևյալ ***նպատակներով՝*** ուսումնասիրել՝ ի՞նչ են իրենցից ներկայացնում ժամանակակից տեղեկատվական հոսքերը, մասնավորապես զանգվածային լրատվամիջոցներում, ինչպիսի՞ն են դրանց ձևավորման և գոյության առանձնահատկությունները մեր երկրի համատեքստում, որո՞նք են մեդիատիրույթի վերափոխման առանձնահատկությունները, և ինչպե՞ս են այդ փոփոխություններն ազդում ՏՀ-ի վիճակի վրա:

Ուսումնասիրության **հիմնախնդիրներն** են՝

1. դիտարկել հիմնարար հասկացությունները՝ «լրագրություն», «ԶԼՄ», «ԶՀՄ» («զանգվածային հաղորդակցության միջոցներ), «տեղեկատվական հոսքեր»՝ նշելով դրանց ծավալները, բովանդակությունն ու տարբերությունը.

2. բացահայտել տեղեկատվական հոսքերի հիմնական բնութագրերը՝ գլոբալիզացված տեղեկատվական տիրույթի համատեքստում,

3. հայտնաբերել նոր մեդիամիջավայրի առանձնահատկությունները և դիտարկել «հրապարակիչների ջոկատի» կայացման հարցը.

4. բացահայտել լրատվամիջոցների «վերադիրքավորման» խնդիրն ու անդրադառնալ այն գործառութային փոփոխություններին, որոնց ենթարկվում է լրագրողի մասնագիտությունը.

5. պարզել Հայաստանի ԶԼՄ-ներում տեղեկատվական հոսքերի առանձնահատկությունները:

Այսպիսով՝ հետազոտության ***օբյեկտը*** Հայաստանի մեդիատիրույթն է ամբողջությամբ, իսկ դիտարկման ***առարկան***՝ տեղեկատվական հոսքերը Հայաստանի Հանրապետության ԶԼՄ-ներում:

Դրանից ելնելով՝ ընտրվել է ***հետազոտության հետևյալ մեթոդաբանությունը՝*** դիտում, վերլուծության, համեմատության, ինդուկցիայի, ընդհանրացման մի շարք մեթոդների օգտագործում (էմպիրիկ մեթոդներ): Բացի դրանից՝ իրականացվել են նաև հարցազրույցներ փորձագետների հետ, կատարվել են սոցիոլոգիական հարցումներ, հետազոտվել է մեդիայի ակտուալ բովանդակությունը, և կատարվել է մեդիավերլուծություն:

Խնդրի տեսական մշակվածությունը: Հեղինակը դիմել է գիտական աշխատանքների լայն շրջանակի: Ուսումնասիրության տեսական հիմքը կազմում են արևմտյան հետևյալ տեսաբանների աշխատությունները՝ Ժ. Բոդրիար («Սպառման հասարակություն. դրա առասպելներն ու կառուցվածքները»[1]), Է. Թոֆլեր («Երրորդ ալիքը»[2]), Մ. Կաստելս («Տեղեկատվության դարաշրջան. տնտեսություն, հասարակություն և մշակույթ»[3]), Ջ. Թրաութ, Էլ. Ռայս («Դիրքավորում. ճակատամարտ մտքերի համար»[4]) և այլն:

Ժամանակակից տեղեկատվական հոսքերի կառուցվածքում ՁԼՄ-ների տեղն ու դերը ըմբռնելու գործում նշանակալի ներդրում է ունեցել ռուս գիտնականների մի մեծ խումբ, այդ թվում՝ Է. Վարտանովան[5], Է. Օլեշկոն[6], Է. Պրոխորովը[7], Վ. Գորոխովը[8], Է. Ախմադուլինը[9], Գ. Չևոզյոռովան[10], Վ. Տերինը[11] և շատ ուրիշներ, ինչպես նաև արևմտյան բազմաթիվ հետազոտողներ՝ Գ. Մ. Մաքլյուեն («Մեդիայի ընկալումը. մարդու արտաքին ընդլայնումները»[12]), Ջ. Քին («Ժողովրդավարություն և մեդիա անկում»[13]) և այլք:

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական հոսքերի թեմային և հատկապես ՁԼՄ-ների դերին անդրադարձել են արևմտյան շատ մտածողներ ու գիտնականներ, որոնց աշխատությունները ձևավորել են գիտական ամբողջա-

---

[1] Տե՛ս ***Бодрийяр Ж.,*** Общество потребления. Его мифы и структуры. М.: Культурная революция, Республика, 2006.

[2] Տե՛ս ***Тоффлер Э.,*** Третья волна. М.: АСТ, 2010.

[3] Տե՛ս ***Кастельс М.,*** Информационная эпоха: экономика, общество, культура. М., 2000.

[4] Տե՛ս ***Траут Дж., Райс Эл.,*** Позиционирование: битва за умы. 4-е изд. СПб.: Питер, 2007.

[5] Տե՛ս ***Вартанова Е.Л.,*** К определению современной журналистики // Меди@льманах. 2014. № 3. С. 8-9; *Вартанова Е.* Колонка редактора. МедиаТренды. No 1 (50). М. 2015.

[6] Տե՛ս ***Олешко Е. В.,*** Современные информационные потоки и роль СМИ в их формировании. [Էլեկտրոնային աղբյուր]: URL՝ http://elar.urfu.ru/bitstream/10995/39819/1/iurp-2016-150-06.pdf (մուտքի ամսաթիվը՝ 29.01.2019):

[7] Տե՛ս ***Прохоров Е. П.,*** Введение в теорию журналистики: Учебник / М: Аспект Пресс, 2009.

[8] Տե՛ս ***Горохов В.,*** Репозиционирование СМИ в медиатизированном обществе // Меди@льманах. 2018. № 5. [Էլեկտրոնային աղբյուր]: URL՝ http://mediaalmanah.ru/upload/iblock/bf8/5.18_14-23.pdf (մուտքի ամսաթիվը՝ 15.02.2019):

[9] Տե՛ս ***Ахмадулин Е.В.,*** Основы теории журналистики: учебник и практикум для академического бакалавриата / Е.В. Ахмадулин. 2-е изд., испр. и доп. М.: Изд-во Юрайт, 2017.

[10] Տե՛ս ***Чевозерова Г.В.,*** Основы теории журналистики. Часть 1. Метажурналистика // Учеб. пособие в 2 ч. 2-е изд., стер. Тольятти: Изд-во ТГУ, 2013.

[11] Տե՛ս ***Терин В.П.,*** Массовая коммуникация: исследование опыта Запада. М.: МГИМО МИД РФ, 2000.

[12] Տե՛ս ***Маклюэн Г. М.,*** Понимание Медиа: Внешние расширения человека. Перевод с английского: В.Г. Николаев. М., 2003.

[13] Տե՛ս ***Кин Дж.,*** Демократия и декаданс медиа / Дж. Кин. М.: Изд. домВШЭ, 2015.

կան տեսակետ՝ մասսմեդիայի դերակատարման փոխակերպման իրավիճակի վերաբերյալ՝ տեղեկատվական հասարակության կազմավորման պայմաններում: Հարկ է նշել, որ այս հարցում ռուս հետազոտողներին ավելի շատ հետաքրքրում է այն դերը, որ խաղում են ՁԼՄ-ներն իրենց հասարակության համակարգում: Նրանք ավելի քիչ են ուշադրություն դարձնում միջազգային պրակտիկային: Վերոհիշյալ բոլոր աշխատանքները տեսական հիմք են դարձել այս ուսումնասիրության համար՝ թույլ տալով ուսումնասիրելու վերափոխման գործընթացի հիմնական պայմաններն ու պատճառները, պարզել դրանց արդյունքում ծագած հակասությունները: Խոսելով տեղեկատվական հոսքերի ուսումնասիրության շրջանակներում հայրենական հետազոտությունների մասին՝ պետք է փաստել, որ դրանք գործնականում գոյություն չունեն կամ մշակված են անբավարար խորությամբ: Ատենախոսության շրջանակներում դիմեցինք պրոֆեսոր Ս. Երիցյանի աշխատություններին («Լեզվաբանական պրագմատիկ մեթոդների կիրառումը մեդիատեքստի ուսումնասիրություններում»[14], «Հայաստանի հեռուստատեսություն. զարգացման 50 տարի», «Խոհեր՝ կադրից դուրս (Հեռուստալրագրության տեսություն և պրակտիկայի հարցեր)», «Հեռուստատեսային մասնագիտություններ. կրթությունից մինչև վարպետություն», «Հեռուստահաղորդում. մտահղացումից մինչև եթեր»[15]), մի շատ հետաքրքիր և բովանդակալից աշխատության՝ «Զանգվածային լրատվության և քաղաքական հաղորդակցության հրատապ խնդիրները», որը կազմվել է հայ և ռուս մի խումբ հեղինակների կողմից[16], մեդիափորձագետ Ս. Մարտիրոսյանի, ինչպես նաև մի շարք հեղինակների գիտական հոդվածներին: Բայց այս ուսումնասիրություններում առավելապես բացահայտվում են լրագրողական գործունեության ընդհանուր առաջարկները, ներկայացվում են աշխատանքի հիմնական կանոններն ու սկզբունքները՝ և՛ մասնագիտական, և՛ բարոյական: Այս աշխատանքները հետաքրքիր են և անհրաժեշտ տեսական ընդհանրացման տեսանկյունից: Հեղի-

---

[14] Տե՛ս ***Ерицян С. С., Тадевосян М. Р.,*** Применение лингво-прагматических методов в исследовании медиатекста. Ученые записки НовГУ им. Я. Мудрого. Изд-во: Новгородский государственный университет имени Ярослава Мудрого, 2019.

[15] Տե՛ս ***Երիցյան Ս. Ս.,*** Հայաստանի հեռուստատեսություն. զարգացման 50 տարի. Եր.: Տիգրան Մեծ, 2007, ***Երիցյան Ս. Ս.,*** Խոհեր՝ կադրից դուրս (Հեռուստալրագրության տեսության և պրակտիկայի հարցեր), Եր.: Երևանի համալս. հրատ., 2002, ***Երիցյան Ս. Ս.,*** Հեռուստատեսային մասնագիտություններ. կրթությունից մինչև վարպետություն, Եր.: Էդիթ Պրինտ, 2007, ***Երիցյան Ս. Ս.,*** Հեռուստահաղորդում. մտահղացումից մինչև եթեր. Եր.: Էդիթ Պրինտ, 2007:

[16] Տե՛ս Актуальные вопросы массовой информации и политических коммуникаций: коллективная монография /***С. В. Ануфриенко, А. В. Атанесян, А. С. Тер-Арутюнян, А. К. Боташева, Н. А. Мелконян, О. Ф. Волочаева, Г. Б. Овчарова, А. Е. Мкртичян, И. А. Румачик, Л. К. Саадян, Н. Н. Мартиросян*;** под общей ред. доктора полит. наук, профессора А.В. Атанесяна, канд. полит. наук И. А. Румачик, Ереван: Изд-во Ереванского государственного университета, 2017.

նակին հետաքրքրում է մեկ այլ խնդիր՝ լրատվամիջոցների ժամանակակից տեղեկատվական հոսքերի ձևավորումը տեղեկատվական տիրույթի վերափոխման համատեքստում: Եվ այդ թեման մինչ օրս ուսումնասիրված չէ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ փորձ է արվել տեսականորեն իմաստավորել, թե ինչ են իրենցից ներկայացնում տեղեկատվական հոսքերն այսօր, և առաջին անգամ հայաստանյան տեղեկատվական տիրույթի ուսումնասիրման համատեքստում ներկայացված է, թե ինչպիսին են դրանց կառուցվածքն ու ձևավորման մեխանիզմը: Բացի այդ՝ հիմնավորված է, որ հիմնական մեդիահասկացությունները՝ «լրագրություն», «ՋԼՄ», «ՋՀՄ», «տեղեկատվական հոսքեր», ծավալային և բովանդակային առումով հավասար չեն, դիտարկվել են մեդիայի ոլորտում տեղի ունեցող առավել վառ արտահայտված տրանսֆորմացիոն երևույթներն ու գործընթացները, քննվել է տեղեկատվական հոսքերի վիճակի վրա դրանց ազդեցության հարցը: Առաջին անգամ ուսումնասիրվել է ՋԼՄ-ների «վերադիրքավորման» հարցը, բացահայտվել են Հայաստանի տեղեկատվական հոսքերի հիմնական բնութագրական առանձնահատկությունները, դիտարկվել է տեղեկատվական հոսքերի ազդեցության հարցը երկրի տեղեկատվական անվտանգության ասպարեզում:

Ուսումնասիրության տեսական կարևորությունն այն է, որ հեղինակի առաջարկած հիմնադրույթներն ու եզրակացությունները կարող են որոշ չափով լրացնել տեղեկատվական հոսքերի ձևավորման և զարգացման տեսական ընկալման բացը, բացահայտել Հայաստանում տեղեկատվական հոսքերին բնորոշ բնութագրական առանձնահատկությունները:

Գործնական կարևորությունն այն է, որ դրանում ներկայացված եզրակացությունները կարող են օգտագործվել գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև զանգվածային լրատվական միջոցների գործունեության ընթացքում:

Աշխատանքի փորձարկում: Հետազոտության թեմայով հրատարակվել են 29 հոդվածներ, որոնցից ութը՝ ՀՀ և ՌԴ Բարձրագույն որակավորման կոմիտեին ենթակա գիտական հանդեսներում (դրանցից մեկը ինդեքսավորվում է ըստ Scopus և Web of Science տվյալների բազայում), իսկ տասնութը՝ ՌԻՆՑ (РИНЦ) կողմից տվյալների բազայում ինդեքսավորվող հրատարակություններում: Ատենախոսության հիմնադրույթները քննարկվել և ներկայացվել են գիտական զանազան համաժողովներում:

Աշխատության կառուցվածքը: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից և տերմինաբանական բառարանից:

ԳԼՈՒԽ I

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Առաջին գլխի առաջին ենթագլուխը նվիրված է հիմնական մեդիա-հասկացությունների հարաբերակցության հարցի ուսումնասիրությանը: Հետազոտությունների ընթացքում ատենախոսության հեղինակը հանգել է այն եզրակացության, որ, ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտական և փորձագիտական շրջանակներում «Լրագրություն», «ԶԼՄ-ներ», «ԶՀՄ-ներ» և «Տեղեկատվական հոսքեր» առանցքային մեդիա-հասկացությունների բնագավառում առկա է որոշակի տերմինաբանական խառնաշփոթ: Սա շատ հաճախ դառնում է հասկացությունների և, համապատասխանաբար, մեդիական գործընթացների սխալ մեկնաբանության պատճառ: Վերջինիս կապակցությամբ հեղինակի կողմից փորձ է արվում հստակեցնելու վերոնշյալ հասկացությունների իմաստային բովանդակությունը և հաստատել դրանց միջև «ծավալային-բովանդակային» կապը: Արդյունքում եզրակացվել է, որ տվյալ մեդիա-հասկացությունները չեն կարող դիտարկվել որպես համարժեք և հոմանիշային. դրանք պետք է համարվեն «փոխադարձ կախյալ» և ուսումնասիրվեն բացառապես այդ հարաբերակցության շրջանակներում:

Բացահայտելով մեդիահասկացությունների միջև եղած փոխկապակցվածությունը՝ հեղինակը փորձել է ներկայացնել ՏՀ-ի յուրահատուկ առանձնահատկությունները՝ ժամանակակից գլոբալացման պայմաններում:

Երկրորդ ենթագլուխը նվիրված է նշյալ խնդիրներին: Մեդիատիրույթում հաստատված իրավիճակը լավագույնս նկարագրում է սիներգետիկ պարադիգմը: Սիներգետիկայի սկզբունքները մասսմեդիայի հարցերում կիրառելիս հնարավորություն են տալիս պարզելու տեղեկատվական հոսքերի հիմնական բնութագրերը: Դրանք համարժեք են դառնում աշխարհում տիրող տեղեկատվության ժամանակակից վիճակին և կարող են դիտարկվել որպես տեղեկատվական հոսքերի հիմնական նշաններ՝ գլոբալիզացիայի և հետմոդեռնի դարաշրջանի համատեքստում: Այդ ամենը բնականաբար բնորոշ է նաև Հայաստանի տեղեկատվական հոսքերին:

ԳԼՈՒԽ II

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԴԻԱՏԻՐՈՒՅԹԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱԿԵՐԿՈՒՄԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Առաջին ենթագլխում հեղինակը ձևակերպել է հետևյալ հիմնական հասկացությունները: Ներկայացվում է ժամանակակից մեդիամիջավայրը, որ այն նախ ցանցային տարածք է՝ զինված տեխնիկական նոր հնարավորություններ-

րով, որոնք հեշտությամբ կարող են հաղթահարել բոլոր «հին» մեդիական գործառույթները: Ցանցը, ձևավորելով նոր միջավայր, այդ թվում՝ օգտատերերի կարիքներ ու պահանջմունքներ, առաջացնում է նաև համապատասխան լսարան, որն այժմ անվանվում է հետևյալ կերպ՝ «հեղինակող հասարակություն», «հրապարակողներ», «օգտատերեր/յուզերներ»: Այդ հասկացություններն օգտագործվում են լսարանի գործիքակազմը հստակ ներկայացնելու համար: Հանրությունը ձեռք է բերել տեղեկտվության հրապարակման, ինչպես նաև տարածման և՛ հնարավորություն, և՛ միջոցներ, և՛ իրավունք: Այն այլևս կարիք չունի որևէ մեկի թույլտվության: Իհարկե, օգտատերերը միայն «տեխնիկական» հեղինակներ են. նրանք ունեն այդ հնարավորությունը, բայց չեն տալիս որակի կամ տաղանդի երաշխիքներ: Այնուամենայնիվ, այսօր հրապարակողների քանակը հավասարվում է ընթերցողներին, և սա անհատի սոցիալականացման սկզբունքորեն նոր տեսակ է, նախկինում անհայտ: Ազատականացված «հեղինակության» տարածքում տեղեկատվական հոսքերը կազմակերպվում են բլոգերների, մասնավոր հեղինակների, կորպորացիաների կամ հայտնի մարդկանց գրառումներից:

Անկասկած, ԶԼՄ-ները մնում են ՏՀ-ի ձևավորման գործընթացի առանցքային մասնակիցը, բայց միայն շատերից մեկը, թերևս ամենափորձառուն և գրագետը: Նրանք միաժամանակ կորցրել են իրենց մենաշնորհը՝ սոցիալական կարևոր տեղեկատվության ընտրության, լուսաբանման, մեկնաբանման, արտադրության և տարածման գործում: Որպես վերը նշվածի հաստատում՝ մենք կարող ենք վկայակոչել Հայաստանի ԶԼՄ-ներում տեղեկատվական հոսքերի օրակարգի կառուցման համակարգը, որն այժմ ձևավորվում է ոչ միայն ԶԼՄ-ների հաղորդագրություններով. դրանց վրա ուղղակիորեն ազդում են սոցիալական ցանցերը, բլոգոսֆերան, մեսսենջերները և այլն:

Նման իրավիճակում՝ տեղեկատվության տարբեր այլընտրանքային աղբյուրներով մեդիալանդշաֆտի գերհագեցման պայմաններում, արդիական է դառնում ԶԼՄ-ների «վերադիրքավորման» անհրաժեշտությունը, **և այս խնդրին է նվիրված երկրորդ ենթագլուխը**, որտեղ ԶԼՄ-ների «վերադասավորման» հիմնական փուլերը ներկայացվում են կետ առ կետ:

Երրորդ ենթագլուխը նվիրված է լրագրողի մասնագիտության և լրագրողի նկատմամբ պահանջների փոփոխությանը: Լրագրության ժամանակակից տեսության մեջ կա հատուկ հասկացություն՝ «համընդհանուր լրագրող»: Նրա և ավանդականի հիմնական տարբերությունն այն է, որ առաջինը պետք է որոշի տվյալ հաղորդագրության օպտիմալ ձևաչափը և կարողանա դրանում ստեղծել իր սեփական ստեղծագործութունը: Այս որակի մասնագետը դառնում է բովանդակության արտադրող, որն ունակ է գործնականում աշխատելու յուրաքանչյուր հարթակում՝ լինի ռադիո, հեռուստատեսություն, տպագիր կամ մուլտիմեդիա: Իհարկե, դա չի բացառում հեղինակի անձնական նախասիրությունները ռադիոհաղորդման կամ «հաղորդատեսակի» պատրաստման գործում, այլ

խոսում է նեղ մասնագիտացումից լրագրողի հրաժարվելու ունակության և պատրաստակամության մասին: Այսօր նաև ակտիվորեն տեղի են ունենում լրագրողական արտադրանքի ձևաչափի և ժանրի վերափոխումների գործընթացներ: Շատ խմբագրություններ ավելի ու ավելի են դիմում լրագրության հիբրիդային ժանրերի, քանի որ դրանցով աշխատելը հեշտ է և արագ: Ատենախոսությունը ներկայացնում է զգալի թվով օրինակներ, որոնք ցույց են տալիս հայկական լրատվամիջոցների ներգրավումը նման սինթետիկ ժանրերի ամենալայն շրջանակում:

Լրատվական տիրույթի վերոհիշյալ փոփոխությունները հայաստանյան լրատվամիջոցներում ձևավորել են տեղեկատվական հոսքերի հիմնական բնութագրեր ու առանձնահատկություններ, որոնք ձևակերպված են **չորրորդ ենթագլխում:**

Հիմնվելով սեփական և փորձագիտական դիտարկումների վրա՝ հարկ է նշել, որ այսօր Հայաստանի տեղեկատվական տարածքը ներկայացված է որպես շատ տարաբնույթ սուբյեկտ: Այն բաժանված է մի քանի կատեգորիաների: Գոյություն ունի տեղեկատվական դաշտ, որտեղ գործում են ավանդական ՁԼՄ-ները (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, լրատվական գործակալություններ), նոր մեդիայի դաշտ (էլեկտրոնային ՁԼՄ-ներ) և, այսպես կոչված, «այլընտրանքային մասսմեդիաների» դաշտ (սոցիալական ցանցեր, բլոգոսֆերա): Ի թիվս այլ բաների՝ համացանցն անընդհատ տրամադրում է լսարանի հետ շփվելու նոր եղանակներ. օրինակ՝ այսօր ակտիվորեն օգտագործվում են տարբեր մեսսենջերների հնարավորությունները («Telegram», «WhatsApp», «Viber» և այլն): Սակայն այդ բոլոր հարթակները բնականաբար գործում են միմյանց հետ սերտ փոխկապակցված՝ փոխանակվելով տեղեկատվության զանգվածներով: Մեդիահարթակների նմանատիպ փոխկապակցվածությունն ազդում է տեղեկատվության հոսքերի որակի վրա:

Այդ իսկ պատճառով պետք է նշել, որ հայաստանյան մեդիատիրույթում տեղեկատվություն գեներացնող սկզբի դերակատարները պետական գործող սուբյեկտներն են, ներքին և արտաքին ՁԼՄ-ները, ներքին ու արտաքին լսարանը, սոցիալական ցանցերի, բլոգերի և միկրոբլոգերի, մեսսենջերների օգտատերերը (ընդ որում՝ ինչպես կեղծ, այնպես էլ արդյունավետ օգտատերերը): Տեղեկատվական հոսքերը ձևավորվում են տարերային ձևով՝ ինքնաբուխ տարբեր իրադարձություններով և նպատակաուղղված՝ օրվա միջազգային օրակարգում հայտնվելու հեռանկարով: Տեղեկատվության հոսքերը ոչ միայն ազդում են, այլև պետական մարմինների համակ ուշադրության օբյեկտ են դառնում, և ՏՀ-ի հետապնդումից ձևավորվում է պետական օրակարգը:

Ելնելով APR Group-ի հետազոտությունների՝ բարձր վարկանշային ՁԼՄ-ների վիճակագրությունից՝ իրականացվել է հայաստանյան լրատվամիջոցների (2020-ի ապրիլ-օգոստոսի ժամանակահատվածի) բովանդակային վերլուծություն՝ համապատասխան հեռուստաալիքի, ցանցային ՁԼՄ-ի, թերթի և

ռադիոկայանի կտրվածքով հիմնականում ի՞նչ թեմաների են նրանք դիմում, և ի՞նչ վերնագրեր են գերակշռում ՁԼՄ-ներում ինֆոհոսքերի ընդհանուր զանգվածում: Արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը. հիմնականում և՛ հեռուստաալիքները, և՛ ռադիոկայանները, և՛ տպագիր հրատարակությունները, և՛ էլեկտրոնային ՁԼՄ-ներն ստեղծում են իրենց սեփական նյութերը հետևյալ վեց բաժիններին համապատասխան (ըստ նվազման աստիճանի)՝ քաղաքականություն, հասարակություն, խաղաղություն, սպորտ, միջադեպ (թեպետ համաճարակը կատարեց իր փոփոխությունները. որոշակի ժամանակահատվածում հանրության և առողջության վերնագիրը առաջատար էր, չնայած որ կորոնավիուսի թեման դեռևս զիջում էր հասարակական-քաղաքականին): Բայց նախքան ինֆոհոսքերի վերնագրային վերաբաշխման մասին խոսելը, իհարկե, անհրաժեշտ է անդրադառնալ ՁԼՄ-ներում ՏՀ-ի վերաբաշխման այլ տեսակներին: Այսպիսով՝ սկզբում բոլոր ՁԼՄ-ները՝ լինեն դրանք հեռուստաալիք, ռադիոկայան կամ տպագիր արտադրանքի տեսակ, բացի «հեռարձակման» իրենց հիմնական ձևից, անշուշտ, համացանցում ունեն իրենց «ներկայացուցչական գրասենյակները» (պաշտոնական կայք, հաշիվներ սոցիալական ցանցերում, «Telegram»-ալիքներում): Դա շատ հետաքրքիր տարբերակ է բովանդակության, թեմաների, լսարանի, պատասխանատվության, ժանրային և ձևաչափային ներկայացվածության վերաբաշխման և այլնի համար:

Հայաստանի տեղեկատվության հոսքերը բնութագրվում են առավելապես իրենց սահմանական կողմնորոշմամբ, լրահոսը բաղկացած է զուտ «հայկական» հաղորդագրություններից: Միջազգային տեղեկատվությունը հայաստանյան ՁԼՄ-ներում այնքան էլ լայն և բազմազան չէ: Եվ այստեղ անհրաժեշտ է նշել, որ տեղեկատվական հոսքերը հիմնականում կազմվում են երկու հիմնական բաղադրիչներից. դրանք ամենից առաջ վերաբերում են զուտ հայաստանյան արտաքին ու ներքին քաղաքական շահերին, ինչպես նաև դրսից ներմուծված օրակարգերին, որոնք կարող են հետաքրքրել հասարակությանը՝ ըստ մեր երկրի բնակչության որոշ մասի արտաքին քաղաքական նախապատվությունների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության արդյունքում և մեր կողմից բարձրացրած խնդիրներից ելնելով՝ հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Առաջին գլխում մշակած հայեցակարգային-կատեգորիալ, ընդհանուր առմամբ, ապարատը թույլ տվեց ուսումնասիրելու Հայաստանի մեդիատիրույթում տիրող բազմաբնույթ և տեղեկատվական քաոսային հոսքերը և ենթարկել կառուցվածքային ու համակարգային ճշգրտման, բացահայտել դրանց բովանդակային, ժանրային և ձևաչափային բնութագրերը, սահմանել այդ հոսքերի

ղեկավարման և կողմնորոշման հնարավոր ուղիները՝ երկրի տեղեկատվական անվտանգության բազային ասպեկտների տեսանկյունից: Դա կօգնի խուսափելու ճգնաժամային իրավիճակներից, որոնք պայմանավորված են տասնյակ հազարավոր սպառնալիքներով, մարտահրավերներով և բնորոշ են ժամանակակից տեղեկատվական հիբրիդային պատերազմներին:

2. Գիտական և փորձագիտական շրջաններում նկատվում է որոշակի տերմինաբանական խառնաշփոթ՝ առանցքային մեդիայի հասկացությունների շուրջ՝ «լրագրություն», «ԶԼՄ», «ԶՀՄ» և «տեղեկատվական հոսքեր»: Տերմինաբանական հստակության բացակայությունը կարող է հանգեցնել հասկացությունների և մեդիա-գործընթացների սխալ ընկալման: Դրանից ելնելով՝ փորձ է արվել հստակեցնել այս հասկացությունները և սահմանել նրանց միջև «ծավալային ու իմաստային» կապը:

3. Մեդիատիրույթում առավել ամփոփ ձևավորված իրավիճակը համարժեք նկարագրելուն հարմար է սիներգետիկ պարադիգմը: Մասսմեդիայի հետ կապված սիներգետիկայի սկզբունքները հնարավորություն են տալիս պարզելու տեղեկատվական հոսքերի այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են դինամիզմը, բաց լինելը, ոչ գծայնությունը, դիսկրետությունը, դիսսիպատիվությունը, որոնք անհավասարակշռության պայմաններում ձևավորում են հետագայում գերիշխելու հակում ունեցող կառույցներ՝ դառնալով նմուշի համար օրինակներ և ինքնակազմակերպման կենտրոններ: Տեղեկատվության հոսքերի վերը նշված բոլոր բնութագրերը դարձնում են դրանց համարժեք տեղեկատվության ժամանակակից վիճակին և կարող են դիտարկվել որպես տեղեկատվության հոսքերի հիմնական նշաններ՝ գլոբալիզացիայի և հետմոդեռնի դարաշրջանի պայմաններում, որոնք նույնպես բնորոշ են Հայաստանի տեղեկատվական հոսքերին:

4. Թվային տեխնոլոգիաներն այսօր նոր մարտահրավերներ են ստեղծում ավանդական մեդիաների համար. շփման նոր ձևաչափեր, նոր լեզուներ, նոր քերականություն: Բազմալիքություն և բազմահարթակություն, թվային տիրույթ, «հեղինակող» հանրությունը տրանսմեդիա լրագրություն, լոնգրիդների լրագրություն, վիրտուալ իրականություն և մեծ տվյայներ. այդպիսին են հեղափոխական վերափոխումների արդյունքները, որոնք այսօր կատարվում են մեդիայի աշխարհում: Տեղաշարժեր կատարվեցին դասական ԶԼՄ-ների մոդելից դեպի նոր մեդիապարադիգմեր, լսարանից դեպի օգտատեր, ձևաչափից դեպի բովանդակություն, տարածումից դեպի մատչելիություն, գծային պատմությունից դեպի հիպերտեքստ: Հաջողվեց բացահայտել, որ այս փոփոխությունները մեծապես ազդեցին տեղեկատվական հոսքերի կառուցվածքի և դրանց ձևավորման համակարգի վրա: Բացահայտվել են նաև տեղեկատվական հոսքերի առանցքային առանձնահատկությունները և ժամանակակից զարգացման միտումները:

5. Նման պայմաններում մեդիաների լանդշաֆտի՝ տարբեր այլընտրանքային տեղեկատվության աղբյուրներով գերհագեցվածության մթնոլորտում

ՁԼՄ-ների «վերադիրքավորման» հարցը դառնում է ավելի հրատապ: Այդ գործընթացը ներառում է համակարգային հատկությունների ձեռքբերում, որոնք առաջանում են այնպիսի գործողությունների համադրման արդյունքում, ինչպիսիք են լրատվամիջոցների գործունեության վերլուծությունը և պլանավորումը, տեխնոլոգիական ապահովումը, ստեղծագործական մոտեցումները, ի վերջո, բարձրորակ լրագրողական հրապարակումների ստեղծումը: Այլ կերպ ասած՝ դա մասսմեդիայի գործունեությունն ապահովող գործոնների ինտեգրումն է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին զարգացումներում: Հայաստանի լրատվական դաշտն զգում է նման վերափոխման գործընթացների անհրաժեշտությունը, և մի շարք լրատվամիջոցներ ակտիվորեն դիմում են «վերադիրքավորման» տեխնոլոգիաներին:

6. Այսօր Հայաստանի տեղեկատվական տարածքը ներկայացված է որպես շատ տարաբնույթ սուբյեկտ: Այն բաժանված է մի քանի կատեգորիաների: Գոյություն ունի տեղեկատվական դաշտ, որտեղ գործում են ավանդական ՁԼՄ-ները (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, լրատվական գործակալություններ), նոր մեդիայի դաշտը (էլեկտրոնային ՁԼՄ-ներ) և, այսպես կոչված, «այլընտրանքային մասսմեդիաների» տարածությունը (սոցիալական ցանցեր, բլոգոսֆերա): Ի թիվս այլ իրողությունների՝ համացանցն անընդհատ տրամադրում է լսարանի հետ շփվելու նոր եղանակներ, այսօր ակտիվորեն օգտագործվում են տարբեր մեսսենջերների հնարավորությունները («Telegram», «WhatsApp», «Viber» և այլն): Սակայն այդ բոլոր հարթակները բնականաբար գործում են միմյանց հետ սերտ փոխկապված՝ փոխանակվելով տեղեկատվության զանգվածներով:

7. Տարածաշրջանի բարդ աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված՝ առաջնային են բովանդակության քաղաքականացման բարձր աստիճանը, տեղեկատվական պատերազմը, որում ակտիվորեն ներգրավված է Հայաստանի Հանրապետությունը, առնվազն հարևան երկու երկրների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ (այս թեման գերակայում է մեր մեդիաօրակարգում), երկրի ծանր սոցիալ-տնտեսական պայմանները, ներքաղաքական ճգնաժամը:

8. Հայաստանյան տեղեկատվական դաշտի ազատականացումն իր հերթին ստեղծում է տեղեկատվական հոսքերի որոշակի խառնաշփոթ. դրանց մեջ կարելի է ընդգծել բացարձակապես անկառավարելի հոսքեր, քանի որ դրանք բնութագրվում են համակարգված գործողությունների բացակայությամբ, ինչը, ի դեպ, բնորոշ է Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի ՏՀ-ին. հայաստանյան տեղեկատվական հոսքերը ներառում են բազմաթիվ «լցոցներ», «արտահոսքեր», «կեղծիքներ»: Հայաստանի ՁԼՄ-ների ՏՀ-ը լուրջ արտաքին ազդեցություն են զգում հայկական սփյուռքի (հատկապես սոցիալական ցանցերի միջոցով) և տարածաշրջանային (նաև ոչ տարածաշրջանային) գործիչների կողմից (ՏՀ-ի համապատասխան բաժանումը ռուսամետ և արևմտամետ հատվածների):

9. Հայաստանի ԶԼՄ-ներում ՏՀ-ի ազդեցությունը երկրի ազգային և տեղեկատվական անվտանգության մակարդակի վրա է: Դրանում է տարածաշրջանի ինֆոհոսքերի առանձնահատկությունը: Այդ հանգամանքը բացատրվում է նաև բովանդակության քաղաքականացման մակարդակով: ՏՀ ձևավորման չկարգավորված լինելը և անվերահսկելիությունը, ինչպես պետության, այնպես էլ այլ կառույցների կողմից, ԶԼՄ-ները կարող են երկրի համար դառնալ խոցելի կետ: Նախ՝ տեղեկատվական հոսքերի ծավալի կտրուկ աճի պատճառով (այնտեղ շատ է տեղեկատվական «աղբը»՝ կեղծ, չստուգված, անվստահելի հաղորդագրությունները, տեղեկատվությունը, որոնց տարածումը արգելվում է օրենքով): Այս կամ այն երկրի քաղաքացիները, եթե մեդիագրագիտության մակարդակը ցածր է, սկսում են բառացիորեն մոլորվել հաղորդագրությունների այս հսկայական զանգվածում, հետևաբար նրանց կարողությունը համարժեք ընկալելու և հասկանալու կատարվող իրադարձությունները և «ֆիլտրելու» հաղորդագրությունները, նվազում են: Ակնհայտ է, որ լսարանը բախվում է հանրային գիտակցության վրա մանիպուլյատիվ ազդեցություն գործադրելու նոր մեխանիզմի հետ: Դրանից կարող են օգտվել հակառակորդները միջազգային ասպարեզում՝ զգալի վնաս պատճառելով տեղեկատվական գործընթացներին և պետության տեղեկատվական համակարգին: Այդ իսկ պատճառով Հայաստանի համար, ելնելով աշխարհաքաղաքական դիրքից և ներքաղաքական իրավիճակից, տեղեկատվական հոսքերի ձևավորման հարցը պետք է դիտարկել ազգային և տարածաշրջանային անվտանգության ռազմավարության համատեքստում: Տեղեկատվությունը ուժային հարաբերությունների բարդ ցանցի մի մասն է: Հետևաբար տեղեկատվական հոսքը միշտ էլ քաղաքական է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն: Այսինքն՝ միշտ արտացոլում է ուժային հարաբերությունները և ծառայում է որպես այս կամ այլ ազդեցության միջնորդ:

Ատենախոսության մեջ բացահայտվել են նաև այն ***առանցքային մարտահրավերները***, որոնց հետ այսօր բախվում են հայաստանյան մեդիատիրույթը, մասնավորապես լրատվամիջոցներում տիրող քաոսային և անվերահսկելի տեղեկատվական հոսքերը, իրավական հիմքերի անբավարար վիճակ՝ տեղեկատվության ոլորտում հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև իրավակիրառման պրակտիկայումլ: Այդ մարտահրավերների պատասխանը այն ***հայեցակարգային առաջարկների*** մշակումն է, որոնք նշված են ԶԼՄ-ների գործունեության վերադիրքավորմանը վերաբերվող մասում (տե՛ս վերևում): Հաջողվել է մշակել մի շարք **նախաձեռնություններ և առաջարկներ**, որոնք կօժանդակեն երկրի մեդիադաշտում առկա խնդիրների լուծմանը:

1. Խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել առանցքային մեդիա-հասկացությունների ճշգրտման հարցին («լրագրություն», «ԶԼՄ», «ԶՀՄ», «տեղեկատվական հոսքեր»), իրենց միջև «ծավալային և իմաստային» հարաբերությունների հաստատմամբ, նրանց հետագա գործնական, տեսական և օրենսդրական գործունեության մեջ օգտագործման նպատակով:

2. Առաջարկվում է կենտրոնանալ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգի կառավարման ռազմավարության բարելավման խնդիրների վրա (թերևս՝ մշակման), որը ներառելու է նպատակների, խնդիրների և հիմնական միջոցների համալիր գործնականում կիրառման նպատակով: Տեղեկատվական քաղաքականությունը պետք է առարկա լինի պետական մարմինների պատասխանատվության և կառավարման բոլոր մակարդակներում: Տեղեկատվական քաղաքականությունը հասարակական կայուն հարաբերությունների ձևավորման գործիք է, որը նախատեսված է պետական կառավարման գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար և չի կիրառվում գրաքննության նպատակով:

3. Խորհուրդ է տրվում անդրադառնալ հետևյալ քայլերին. Հայաստանի Հանրապետության տեղեկատվական քաղաքականության իրավական, նորմատիվ-մեթոդական, գիտատեխնիկական և կազմակերպչական աջակցության արդիականացմանը վերաբերող առաջարկների նախապատրաստում, ներառյալ կատարելագործում՝ առաջին հերթին հիմնվելով ընթացիկ իրադարձություններին:

4. Առաջարկվում է հայտնաբերել տեղեկատվական քաղաքականության իրականացման առանձնահատկությունները՝ պետության գործունեությունը տարբեր ոլորտներում (քաղաքական, տնտեսական, պաշտպանության, արտակարգ իրավիճակների), համապետական տեղեկատվության և հեռահաղորդակցման համակարգերում (պետության գործունեության յուրաքանչյուր ոլորտում անհրաժեշտ է առանձին և հատուկ աշխատանքների կազմակերպում, տեղեկատվության անվտանգության ապահովման ձևերի և մեթոդների ապահովում՝ ելնելով իրավիճակի վրա ազդող հատուկ գործոններից):

5. Առաջարկվում է ուշադրություն դարձնել քաղաքացիների, հասարակության և պետության միջև տեղեկատվության ազատ փոխանակման պահանջների ու տեղեկատվության տարածման անհրաժեշտ սահմանափակումների միջև հավասարակշռություն հաստատելու և պահպանելու խնդիրներին (այս հանգամանքը բխում է տեղեկատվական պատերազմի պահանջներից):

6. Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ խնդրին. քաղաքացիների իրավունքները մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան գաղտնիքների, նամակագրության գաղտնիության, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, առայժմ չունեն անհրաժեշտ իրավական, կազմակերպչական և տեխնիկական աջակցություն: Պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակից ֆիզիկական անձանց կողմից հավաքագրված փաստերի (անձնական տվյալների) պաշտպանությունը նույնպես կարիք ունի բարելավման ու արդիականացման: Անհրաժեշտ է վերահսկել այդ ոլորտում տեղեկատվության պաշտպանության միջոցների ստեղծումը և օգտագործման գործ-

ընթացը՝ գործունեության հարկադիր լիցենզավորման միջոցով և սերտիֆիկացման ենթարկել տեղեկատվության պաշտպանության միջոցները:

7. Առաջարկվում է ուժեղացնել աշխատանքը տեղեկատվական քաղաքականության, տեղեկատվական անվտանգության ոլորտում՝ հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների զարգացման միջոցով: Իրականացնել տեղեկատվական քաղաքականության և տեղեկատվական անվտանգության ոլորտում կադրերի վերապատրաստման միասնական համակարգի մշակում և կատարելագործում, ինչպես նաև Հայաստանի կրթական համակարգում տեղեկատվական գրագիտության մակարդակը բարձրացնելու համար պետք է պարտադիր ներմուծել ծրագրեր՝ դրանք կատարելագործելով տարածել ու գործարկել:

Ինչպես արդեն նշեցինք վերևում, մեր երկրի տեղեկատվական հոսքերի անվերահսկելի և քաոսային գոյությունը սպառնալիք է պետության տեղեկատվական անվտանգության համար: Եվ այսպիսի սպառնալիքների ազդեցության պատճառով Հայաստանի Հանրապետության հիմնական շահերը քաղաքական, տնտեսական, պաշտպանության և պետական գործունեության այլ ոլորտներում կարող են ամենալուրջ վտանգներ պարունակել, սոցիալ-տնտեսական վնասներ հասցվել հասարակությանը և առանձին քաղաքացիներին: Բացի այդ՝ նման ազդեցության արդյունքում որոշակի խոչընդոտներ կարող են ստեղծվել զարգացած պետությունների և դաշնակցային երկրների հետ Հայաստանի լիարժեք գործընկերության ու համագործակցության ուղղությամբ (այն չափազանց կարևոր է ՀՀ-ի համար՝ իր աշխարհաքաղաքական միջավայրի հիման վրա): Խոչընդոտները կարող են առաջանալ քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ կարևոր որոշումների ընդունման գործընթացում, կարող են նաև թուլանալ (կամ ընդհանրապես խարխլվել) Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը և հեղինակությունը համաշխարհային ասպարեզում:

Զուգահեռաբար երկրում կարող է ստեղծվել նաև քաղաքական լարվածության և անկայունության մթնոլորտ. հնարավոր է հրահրվեն զանգվածային անկարգություններ, սոցիալական հակամարտություններ, որոնց արդյունքում կարժեզրկվեն և կխաթարվեն կառավարման, սպառազինման վերահսկման համակարգերի, զորքերի և ռազմական տեխնիկայի, ինչպես նաև վտանգավորության բարձր աստիճանի օբյեկտների գործունեության գործընթացները:

Նման ազդեցության արդյունքում կարող է նվազել պետության գիտական և տեխնիկական զարգացման ընթացքը, հնարավոր է մշակութային ժառանգության կորուստներ ունենալ, կարող են տուժել կրթության գործընթացները: Տեղեկատվության ոլորտում համակարգչային խախտումների արդյունքում զգալի տնտեսական վնաս կարող է առաջանալ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և բիզնես-կառույցներում: Պետության տեղեկատվական քաղաքականության ռազմավարության բարելավումը, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում իրավական ասպեկտների

և մի շարք դրույթների արդիականացումը, ինչպես նաև ՁԼՄ-ների վերադիրքավորման գործընթացի միտման պահպանումը, կարելի է կարգավորել մեդիային վերաբերող հարցեր-խնդիրներ, «վերահսկողության» պայմաններ ստեղծել ՁԼՄ-ներում տեղեկատվական հոսքերի նկատմամբ և դրանով իսկ դիմակայել երկրի տեղեկատվական անվտանգության առկա սպառնալիքներին կամ «մեղմել» դրանց հետևանքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1.**Тадевосян М. Р.,** Медиа как инструмент формирования «массового человека»: основные тенденции. Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Вып. №2. Ер.: Изд-во РАУ, 2018. С. 112–116.

2. **Тадевосян М. Р.,** Роль и место СМИ в структуре современных информационных потоков. Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Вып. №3. Ер.: Изд-во РАУ, 2018. С. 212–217.

3. **Ерицян С. С., Тадевосян М. Р.,** Современный медиатекст в инфокоммуникативном пространстве. Ер.: Изд-во Известия НАН РА. 2019. С. 288-299.

4. **Ерицян С. С., Тадевосян М. Р.,** Применение лингво-прагматических методов в исследовании медиатекста. Ученые записки НовГУ им. Я. Мудрого. Изд-во: Новгородский государственный университет имени Ярослава Мудрого, 2019. С. 1–4

5. **Абрамян Н. Л., Алекян М. В., Тадевосян М. Р.**, К вопросу о репозиционировании СМИ в условиях модификации информационных потоков. Ученые записки Новгородского государственного университета имени Ярослава Мудрого. № 6 (31). 2020. С. 1–6.

6. **Ерицян С. С., Тадевосян М. Р.**, Специфика информационных потоков в условиях глобализации. Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Вып. №2. Ер.: Изд-во РАУ, 2020. С. 130-147.

7. **Тадевосян М. Р.**, Становление современных инфо-потоков и изменение аудитории новых медиа. Вестник РАУ (серия: гуманитарные и общественные науки). Вып. №3. Ер.: Изд-во РАУ, 2020. С. 85-98.

8. **Абрамян Н. Л., Алекян М. В., Тадевосян М. Р.,** К вопросу об уточнении некоторых медиапонятий. Выпуск «Журналистика» «Вестника НГУ» (в печати).

ТАДЕВОСЯН МЕРИ

СОВРЕМЕННЫЕ ИНФОРМАЦИОННЫЕ ПОТОКИ В СМИ АРМЕНИИ: ОСОБЕННОСТИ ТРАНСФОРМАЦИИ МЕДИАПРОСТРАНСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.06 – «Журналистика».

Защита диссертации состоится 12 июля 2021 г. в 12^{00} часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 012 ВАК по литературоведению.

Адрес: г. Ереван, 0025, ул. Абовяна $52^{а}$, ЕГУ, корпус факультета армянской филологии, аудитория 202.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. На одну из связанных с актуальнейшим состоянием информационного общества тем пишется настоящая диссертационная работа. Что есть информационные потоки (ИП)? ИП – это то же самое, что и СМИ? Каковы именно изменения в самих СМИ, что принципиально нового возникло с появлением социальных сетей, мобильных приложений, мессенджеров и т.д.? Каков он, этот потребитель новых медиа? Каково влияние ИП на уровень личной и национальной безопасности? Каковы основные черты ИП в СМИ Армении? Этим весьма актуальным вопросам посвящено данное исследование. **Цель и задачи исследования.** Актуальность работы обусловила ее цель, которой является: изучение того, что собой представляют современные информационные потоки, в частности, в средствах массовой информации, каковы особенности их формирования и существования в контексте Армении, какова специфика трансформации медиапространства и каким образом эти изменения сказываются на состоянии ИП. Для достижения данных целей были сформированы следующие основные **задачи исследования**: рассмотреть ключевые медиапонятия, уточнив объем и содержание между ними; раскрыть ключевые характеристики информационных потоков в условиях глобализации; выявить особенности новой медиасреды и обратиться к вопросу становления «отряда публикаторов»; раскрыть вопрос о «репозиционировании» СМИ и обратиться к теме об функциональных изменениях, которым подвергается профессия журналиста; выявить особенности инфо-потоков в СМИ Армении.

Теоретическая разработанность проблемы. Обзор литературы демонстрирует, что к теме информационных потоков именно по части той позиции, которую СМИ занимают в современном мире, обращались ряд

западных мыслителей и ученых, чьи труды сформировали современный целостный научный взгляд на ситуацию трансформации роли массмедиа в условиях становления информационного общества. Необходимо отметить, что российских исследователей в этом вопросе больше интересовала та роль, которую СМИ выполняют именно в системе российского общества, они меньше внимание уделяли международному опыту. Все вышеперечисленные работы стали теоретической основой для данного исследования, позволив изучить основные условия и причины трансформационного процесса, выявить возникшие в его результате проблемы и противоречия. Говоря об отечественных исследованиях в рамках изучения информационных потоков, к сожалению, необходимо констатировать, что их практически нет или же разработаны в недостаточной степени. Этим фактором обусловлена **научная новизна** работы, которая состоит в следующем: впервые в рамках страны предпринята попытка теоретического осмысления того, что есть сегодня информационные потоки, какова их структура и механизм их формирования; выявлено, являются ли равнообъемными и равносодержательными ключевые медиапонятия; рассмотрены наиболее ярко выраженные трансформационные явления и процессы, протекающие в сфере медиа, и изучен вопрос об их влиянии на состояние инфо-потоков; впервые поставлен и изучен вопрос о «репозиционировании» СМИ; выявлены основные характерные черты информационных потоков в СМИ Армении; рассмотрен вопрос о влиянии инфо-потоков на уровень информационной безопасности страны.

Теоретическая значимость исследования определяется тем, что предложенные автором основные положения и выводы могут в определенной степени восполнить пробел в теоретическом понимании вопроса формирования и развития информационных потоков, выявить и раскрыть характерные черты, свойственные информационным потокам Армении. **Практическая значимость** заключается в том, что представленные в ней выводы могут быть использованы в процессе научной и учебно-методической работы. Результаты исследования также могут быть применены в практической деятельности самих средств массовой информации.

Структура работы. Работа состоит из введения, двух глав, заключения, списка литературы, приложения и терминологического словаря. **Во Введении** представлено обоснование актуальности проблемы исследования, сформулирована научная новизна, указаны объект и предмет диссертационной работы, определяются цели, задачи и методология исследования, дан обзор научно-критической литературы, представлена теоретическая и практическая значимость работы. **Первая глава** диссертационной работы посвящена изучению ключевых медиапонятий, системы массовых информационных потоков, а также выявлению ключевых характерных черт ИП в СМИ в условиях

глобализации. **Во второй главе** исследования речь идет о трансформации современного медиапространства и системы информационных потоков в эпоху информационно-технологического прогресса, представлены особенности ИП в СМИ Армении. В **Заключении** работы представлен ряд выводов и предложений, которые составляют основу проведенного исследования.

TADEVOSYAN MERI

CONTEMPORARY INFORMATION FLOWS IN THE ARMENIAN MEDIA: PECULIARITIES OF THE MEDIA SPACE TRANSFORMATION

Dissertation for acquiring Philological science degree. Field of specialization: 10.01.06 – «Journalism».

The defense of the dissertation will take place on Jule 12, 2021 at 12:00 at the HQC of RA's Specialized Council 012 of «Literature Studies» in Yerevan State University.

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

SUMMARY

The topicality of the research. The subject matter of the present dissertation is related to one of the topics related to the current state of the information society. Which are the information flows (IF)? Is IF the same as the media? What fundamental changes did the media undergo with the introduction of social networks, mobile applications, instant messengers, etc.? What is the consumer of new media like? What is the impact of individual entrepreneurs on the level of personal and national security? What are the main features of an individual entrepreneur in the Armenian media?

The current study is devoted to the above mentioned issues. **The purpose and objectives of the study.** The relevance of the dissertation determined its goal, that is: the study of modern information flows, in particular, in the media, the features of their formation and existence in the context of Armenia, the specificity of the transformation of the media space and how these changes affect the situation in IF. To achieve these goals, the following objectives of the study were formed: to consider the key media concepts, specifying the volume and content between them; to reveal the key characteristics of information flows in the context of globalization; to identify the features of the new media environment and address the issue of the formation of a "squad of publishers"; to disclose the issue of "repositioning" the media and address the topic of functional changes that the profession of a journalist undergoes; to reveal the peculiarities of info-flows in the Armenian media. **The theoretical value of the subject matter.** A literature review demonstrates that a number of Western thinkers and scientists, whose works have formed a modern holistic scientific view of the transformation of the role of mass media in the context of the formation of an information society, have addressed the topic of information flows precisely in terms of the position that the media occupy in the modern world. It should be noted that, regarding the current issues, Russian researchers were more concerned about the role that the media play in the system of Russian society; they paid less attention to international experience. All the above mentioned scientific works are considered to be the theoretical basis for the current study, which enables to study the main conditions and causes of the transformation process, to identify the issues and contradictions that arose in the result of research. Considering the

scope of the local research carried on the study of information flows, unfortunately, it must be stated that they are practically nonexistent or have not been sufficiently developed.

The scientific novelty of the work determines the factor which supposes the study of the following issues: for the first time within the country, an attempt has been made to theoretically comprehend what information flows are today, what is their structure and the mechanism of their formation; it was revealed whether the key media concepts such as "journalism", "MM", "MMC", "information flows" are equal and equally meaningful; the most pronounced transformational phenomena and processes occurring in the field of media are considered, and the issue of their influence on the state of info-flows is studied; for the first time the issue of "repositioning" of the media was raised and studied; the main characteristic features of information flows in the Armenian media have been identified; the issue of the influence of information flows on the level of information security of the country is considered. **The theoretical significance** of the study is determined by the fact that the main provisions and conclusions proposed by the author can, to a certain extent, fill the gap in the theoretical comprehension of the issue of the formation and development of information flows, identify and reveal the characteristic features inherent in information flows in Armenia. **The practical significance** lies in the fact that the conclusions presented in it can be used in the process of scientific and educational-methodical work. The results of the research can also be practically applied in the mass media themselves.

The structure of the dissertation. The work consists of an introduction, two chapters, a conclusion, a bibliography, an appendix and terminological dictionary. **In the Introduction**, a substantiation of the relevance of the research problem is presented, scientific novelty is formulated, the object and subject of the dissertation work are indicated, the goals, objectives and methodology of the research are determined, an overview of scientific critical literature is given, and the theoretical and practical significance of the work is presented.**The first chapter** of the dissertation is devoted to the study of key media concepts, the system of mass information flows, as well as the identification of key characteristic features of IS in the media in the context of globalization. **The second chapter** of the study deals with the transformation of the modern media space and the system of information flows in the era of information and technological progress, presents the peculiarities of IS in the Armenian media. The results and a number of proposals of the research are summerized in the **Conclusion.**